



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 մայիսի 2017 թվականի թիվ 105 - Ա

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ «ՆԱՎՈՒՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011թ. դեկտեմբերի 19-ի թիվ 203-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության «Նավուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 4-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 4 որոշումը, եզրակացությունը և Գ. Գևորգյանի 2017 թվականի մայիսի 4-ի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Գայանե Հայկազի Գևորգյանին 2017 թվականի մայիսի 5-ից նշանակել «Նավուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով և լուծել 2016 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ



2017թ. մայիսի 5
ք. Իջևան